

Ա. Մ. Ոսկանյան

### ԿՈՍՈՒՆԻՉՍԻ ՆՅՈՒԹԱ-ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՎՃՌԱԿԱՆ ԷՏԱՊԸ

Հանրագումարի բերելով սովետական ժողովրդի մեծ հաղթանակների արդյունքները, ՍՄԿՊ XXI համագումարը նշեց, որ մեր ժողովրդի հերոսական պայքարի և աշխատանքների ամենազլխավոր արդյունքը նրա ստեղծած սոցիալիստական նոր հասարակարգն է, որն այժմ աստիճանաբար վերածում է կոմունիզմի:

Եթե սոցիալիզմից կոմունիզմին անցնելու քաղաքական հիմքը սովետական սոցիալիստական պետական ու հասարակական կարգն է, ապա այդ անցման տնտեսական բազան կալմում է, երկրի բոլոր արտադրողական ուժերի անընդմեջ և տարեցտարի արագացող զարգացումը: Կոմունիզմի նյութա-տեխնիկական բազայի ստեղծումը հանդիսանում է սովետական ժողովրդի հիմնական տնտեսական խնդիրը, մեր երկրի զարգացման ժամանակակից էտապի գլխավոր բովանդակությունը, իսկ մեծ աշխատանքների յոթնամյա պլանը, որ հաստատվեց ՍՄԿՊ XXI համագումարի կողմից, այն կարևորագույն առաջընթաց քայլն է, որի իրականացման շնորհիվ մեր մեծ հայրենիքը զգալիորեն կմոտենա կոմունիզմի բարձունքներին:

\* \* \*

Անցած 41 տարիների ընթացքում սովետական բազմազգ ժողովուրդների գործադրած դերագույն ջանքերի շնորհիվ, մեր երկիրը դարձել է հզոր սոցիալիստական տերություն՝ բարձր զարգացած արդյունաբերությամբ ու զյուզատնտեսությամբ, առաջավոր գիտությամբ ու կուլտուրայով: Ինչպես արձանագրեց ՍՄԿՊ XXI համագումարը, «Ներկայումս ՍՍՌՄ-ը արդյունաբերական արտադրության ծավալով առաջին տեղն է զբաղում Եվրոպայում և երկրորդ տեղը՝ աշխարհում: Արդյունաբերության համախառն արտադրանքը 1958 թ., 1913 թ. համեմատությամբ, ավելացել է 36 անգամ, ընդ որում ամբողջ ժողովրդական տնտեսության հիմքը հանդիսացող արտադրամիջոցների արտադրությունն աճել է 83 անգամ, մեքենաշինության և մետաղամշակման արտադրանքը՝ 240 անգամ»:

Սովետական սոցիալիստական հասարակարգում, որտեղ գոյություն չունի անտադոնիզմ արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների միջև, ամենալայն հնարավորություններ են ստեղծված արտադրողական ուժերի զարգացման համար: Դրա շնորհիվ սոցիալիստական հասարակարգը զարգանում է անընդհատ, պատմության մեջ չտեսնված տեմպերով, ազատ լինելով

ՍՄԿՊ XXI համագումարի բանաձևը ընկ. Ն. Մ. Խրուշչովի «ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1959—1963 թթ. կոնտրոլ թվերի մասին» զեկուցման առթիվ, Հայկոհրատ, 1959, էջ 7:

ստեղծական ճգնաժամերից և արտադրողական ուժերի ու նյութական բարիքների վատնումից:

Արտադրության բոլոր հիմնական միջոցների, այդ թվում նաև բնական հարստությունների մասնավոր սեփականության վերացման շնորհիվ, մեր երկրում վերջ է տրված բնական ռեսուրսների գիշատիչ ու կամայական օգտագործմանը և նախապայմաններ են ստեղծված այդ հարստությունները պլանավորված ու կոմպլեքսային ձևով ամբողջ հասարակության շահերին փոխադրելու համար, կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման գործին ծառայեցնելու համար: Սոցիալիստական հասարակարգում չկա և չի կարող լինել բնական հարստությունների այնպիսի գիշատիչ ու կամայական օգտագործում, որը հատուկ է կապիտալիստական կարգերին: Եվ այդ իսկ պատճառով նրանում ստեղծված են մինչ այդ շտեմնված հնարավորություններ՝ երկրի բնական հարստությունները ամբողջ հասարակության գիտակցված նպատակներին փոխադրելու համար, մի այնպիսի հասարակության, որը ռացիոնալ ու պլանավորված ուղղություն է տալիս երկրի արտադրողական ուժերի վարպետմանը:

Սոցիալիստական հասարակարգի ամենակարևոր, ամենաբնորոշ հատկանիշներից մեկը, ստեղծության սոցիալիստական սիստեմի կարևորագույն առավելություններից մեկը նրա պլանայնությունն է: Պլանային ստեղծությունը ապահովում է ժողովրդական ստեղծության տարրեր ճյուղերի զարգացման ճիշտ փոխհարաբերությունը, թույլ չի տալիս նրանց անհամաչափ զարգացումը: Մեր երկրի ողջ ստեղծական կյանքը որոշում և նրան սեղանավորում է տալիս պետական միասնական պլանը, որը խարսխված է սովետական հասարակարգի ստեղծական զարգացման օրենքների վրա: ՍՍՍՄ էկոնոմիկան զարգանում է ընդլայնված սոցիալիստական վերարտադրության օրենքների համաձայն, որը նշանակում է արտադրության անշեղ աճ՝ ժողովրդական ստեղծության բոլոր բնագավառներում, ծանր արդյունաբերության գերակշռող աճի պայմաններում, սոցիալիստական կուտակման անընդհատ մեծացում և աշխատավորների նյութական բարեկեցության հարատև վերելք:

Ժողովրդական ստեղծության պլանաչափ, նպատակասլաց զարգացումը, աշխատանքի նոր, սոցիալիստական ու կոմունիստական ձևերը և երկրի բնական հարստությունների առավել ռացիոնալ, կոմպլեքսային օգտագործումը — ահա այն հիմնական, վճռական գործոնները, որոնց առկայությունը մեր երկրում սոցիալիզմից աստիճանաբար կոմունիզմին անցնելու հաջողության գրավականն է:

Ի հակադրություն կապիտալիստական աշխարհի, որտեղ արդյունաբերությունը շափազանց անհամաչափ է տեղաբաշխված, շատ հաճախ կտրված լինելով հումքի աղբյուրներից և սպառման վայրերից, Սովետական Միությունում սոցիալիստական կարգերի անբաժան տիրապետությունը ամենալայն հնարավորություններ է ստեղծում արտադրողական ուժերի ռացիոնալ, սոցիալիստական տեղաբաշխման համար, մեր մեծ հայրենիքի բոլոր շրջանների, մասնավորապես անցյալում հետամնաց ծայրամասերի զարգացման, երկրի ստեղծական հզորության անընդհատ վերելքի, սոցիալիզմի, խաղաղության և դեմոկրատիայի համաշխարհային լազերի ամրապնդման, կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման ու ամրապնդման համար:

Արտադրողական ուժերի նոր, սոցիալիստական տեղաբաշխման շնորհիվ,

ամացած ժամանակաշրջանում սովետական ժողովուրդը հասավ այն բանին, որ հսկայական տերիտորիաներ, որոնք առաջներում «անհեռանկար» էին համարվում (ինչպես, օրինակ՝ Կալախստանը, Անդրվտլգյան մարզերը, Սիբիրը, Հեռավոր Արևելքն ու Հյուսիսը և այլն), դարձան հանածո հումքի ու վառելիքի ամենահարուստ բազաներ, և այդ շրջաններում ստեղծվեցին սոցիալիստական ինդուստրիայի կարևորագույն օջախներ: Լիովին արդարացա՛վ արդյունաբերութունը ղեպի արևելք տեղաշարժելը: Կոմունիստական պարտիայի և Սովետական կառավարության բռնած կուրսը:

Սոցիալիստական ժողովրդական տնտեսությանը հատուկ՝ պլանաչափ (պրոպորցիոնալ) վարձացման օրյեկտիվ օրենքից ելնելով, կազմվում են մեր երկրի տնտեսության վարձացման պլանները և կատարվում է արտադրողական ուժերի սոցիալիստական տեղաբաշխումը երկրի տերիտորիայում: Վերջինս նշանակում է՝ արդյունաբերության և գյուղատնտեսության ճյուղերի ճիշտ, ուղիղնալ ու հավասարաչափ տեղաբաշխում, արդյունաբերական ձեռնարկութունների ճիշտ տեղաբաշխում, բնական հարստութունների խելացի ու համակողմանի օգտագործում, երկրի տնտեսական շրջանների կոմպլեքսային վարձացում, անցյալում հետամնաց ծայրագավառների և մասնավորապես ազգային ռեսպուբլիկաների տնտեսական շեշտակի վերելքի ապահովում, վերջապես, մեր երկրի պաշտպանական հզորության անշեղ ամրապնդում:

Այս հոյակապ խնդիրների իրականացմանը Կոմունիստական պարտիան և Սովետական կառավարութունը ձեռնամուխ եղան սոցիալիստական ռեոլյուցիայից անմիջապես հետո: Լենինը դրա անհրաժեշտութունը մատնանշում էր դեռևս 1918 թ. գրած «Իտա-տեխնիկական աշխատանքների պլանի ուրվագրում»: Այդ խնդիրն էին հետապնդում ԳՈԷԼՌՈՒ-ի և նախապատերազմյան ու հետպատերազմյան հնգամյա պլանները: Արտադրողական ուժերի սոցիալիստական տեղաբաշխման ու նրանց հետագա անշեղ վարձացման մի նոր փայլուն օրինակ է ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության վարձացման 1959—1965 թթ. յոթնամյա պլանը, որը հետապնդում է մեր երկրի հիմնական տնտեսական խնդրի իրականացումը՝ բնակչության մեկ շնչին ընկնող արդյունաբերական արտադրանքի ծավալի տեսակետից հասնել ու առաջ անցնել կապիտալիստական առավել վարգսցած երկրներից, դրանով իսկ խոշոր քայլ կատարել կոմունիզմի նյութա-տեխնիկական բազայի կառուցման գործում:

\* \* \*

ՍՄԿՊ XXI համագումարը նշեց, որ տնտեսական բնագավառում մեր երկրի զլխավոր խնդիրն է՝ առաջիկա յոթնամյակում «բազմակողմանիորեն զարգացնել երկրի արտադրողական ուժերը. ծանր ինդուստրիայի առավել վարչացման բազայի վրա էկոնոմիկայի բոլոր ճյուղերում հասնել արտադրույան այնպիսի աճի, որ թույլ տրվի վճռական քայլ անելու կոմունիզմի նյութա-տեխնիկական բազայի ստեղծման գործում և կապիտալիստական երկրների հետ խաղաղ տնտեսական մրցութան մեջ ՍՍՌՄ-ի հաղթանակի ապահովման գործում: Երկրի տնտեսական պոտենցիալի ուժեղացումը, ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում տեխնիկական հետագա առաջադիմութունը, հասարակական աշխատանքի արտադրողականության անընդհատ աճը պետք է ապահովեն ժողովրդի կենսամակարդակի զգալի բարձրացումը»<sup>2</sup>:

<sup>2</sup> ՍՄԿՊ XXI համագումարի բանաձևը, էջ 111:

Այս հսկայական ծրագրի իրականացման համար, համագումարի որոշմամբ, առաջիկա 7 տարում նախատեսվում է արդյունաբերության համախառն արտադրանքի ավելացում մոտավորապես 80 տոկոսով, այդ թվում արտադրամիջոցների արտադրության բնագավառում («Ա» խումբ)՝ 85—88 տոկոսով և սպառման առարկաների արտադրության բնագավառում («Բ» խումբ)՝ 62—65 տոկոսով: Յոթնամյակի վերջում շուգունի ձուլումը հասնելու է 65—70 միլիոն տոննայի, պողպատինը՝ 86—91 միլիոն տոննայի, գլանվածքի արտադրությունը՝ 65—70 միլիոն տոննայի, ապրանքային երկաթաքարի հանույթը՝ 150—160 միլիոն տոննայի, այլումինի արտադրությունը ավելանալու է 2,8—3 անգամ: Զգալի չափերով ավելանալու է պղնձի ու այլ գունավոր մետաղների, հատկապես հազվագյուտ մետաղների թողարկումը: Մեծ տեղաշարժեր են կատարվելու քիմիական արդյունաբերության, առանձնապես արհեստական ու սինթետիկ թելի (աճ՝ 4 անգամ), պլաստմասսաների ու այլ սինթետիկ նյութերի (աճ՝ 7 անգամ) և հանքային պարարտանյութերի (աճ՝ մոտ 3 անգամ) արտադրության մեջ: 1965 թ. արտադրվելու է 230—240 միլիոն տոննա նավթ, 150 միլիարդ խորանարդ մետր գազ, 600—612 միլիոն տոննա ածուխ: Էլեկտրաէներգիայի արտադրությունը հասցվելու է 500—520 միլիարդ կիլովատ-ժամի, գլխավորապես ի հաշիվ խոշոր ջերմաէլեկտրակայանների կառուցման: Մոտավորապես 2 անգամ ավելանալու է մեքենաշինության ու մետաղամշակման արտադրանքի արտադրությունը:

Արդյունաբերության զարգացման վիթխարի պլանների իրականացման համար անհրաժեշտ է ավելի լրիվ հայտնաբերել ու օգտագործել արդյունաբերական ձևանարկությունների ներքին ռեզերվներն ու հնարավորությունները, գիտության ու տեխնիկայի նվաճումների հիման վրա շարունակ կատարելագործել արտադրության տեխնոլոգիան ու կազմակերպումը, բարելավել սարքավորումների, հումքի և օժանդակ նյութերի օգտագործումը:

Ծանր ինդուստրիայի զարգացման բարձր մակարդակի, ինչպես նաև գյուղատնտեսության հետագա վերելքի հիման վրա զգալի չափերով մեծանալու է ժողովրդական սպառման ապրանքների արտադրությունը: Նախատեսվում է, որ 1958 թ. համեմատությամբ՝ 1965 թ. թևի արդյունաբերության համախառն արտադրանքը կավելանա մոտավորապես 1,5 անգամ, իսկ սննդարդյունաբերության համախառն արտադրանքը՝ մոտավորապես 1,7 անգամ, ըստ որում հատուկ ուշադրություն կդարձվի արդյունաբերական ու պարենային ապրանքների ասորահմենտի ընդլայնման և որակի բարձրացման վրա:

Պառենի ասպարեզում երկրի բնակչության կարիքները և հումքի ասպարեզում արդյունաբերության պահանջմունքները լիովին բավարարելու նպատակով, յոթնամյակի ընթացքում նախատեսվում է գյուղատնտեսության համախառն արտադրանքն ընդհանուր առմամբ ավելացնել 1,7 անգամ, ըստ որում հացահատիկի արտադրությունը հասցվելու է 10—11 միլիարդ փթի, շաքարի ճակնդեղինը՝ 76—84 միլիոն տոննայի, բամբակինը՝ 5,7—6,1 միլիոն տոննայի, մսինը (սպանդանոցային բաշով)՝ առնվազն 16 միլիոն տոննայի, կաթինը՝ 100—105 միլիոն տոննայի, կարտոֆիլինը՝ 147 միլիոն տոննայի և այլն: Այս խնդիրների հաջող կատարման համար հսկայական նշանակություն ունի խամ ու խոպան հողերի հետագա յուրացումը, գյուղատնտեսական արտադրության հետևողական մեքենայացումը, էլեկտրիֆիկացումը և քիմիացումը, ինչպես նաև կուլտնտեսությունների հանրային տնտեսության հետևողական ամրապլան-

դումը, որոնց հիման վրա հնարավոր կլինի ապահովել աշխատանքի արտադրողականության զգալի աճը և գյուղատնտեսական մթերքների ինքնարժեքի իջեցումը:

Յոթնամյակում ծրագրված է իրականացնել տրանսպորտի (հատկապես երկաթուղային) բոլոր հիմնական տեսակների տեխնիկական վերակառուցումը, ավելացնել ծովային, գետային, օդային և ավտոմոբիլային տրանսպորտի փոխադրումների ծավալը, ընդլայնել երկաթուղային, խճուղային, օդային, գետային և խողովակամուղ տրանսպորտի ցանցը, փնչպես նաև կապի ու հաղորդման միջոցները:

Այս բոլոր խնդիրների իրականացման համար անհրաժեշտ է հետևողականորեն իրագործել երկրի տնտեսական շրջանների հետագա կոմպլեքսային զարգացումը՝ բնական ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործման հիման վրա, հաշվի առնելով ձեռնարկությունների նպատակահարմար տեղադրումը և Ֆրանց մասնագիտացումը, ինչպես նաև կոոպերացված կապերի բարելավումն ու ոչ ոսցիոնալ փոխադրությունների վերացումը:

Յոթնամյակում նախատեսված հսկայական կապիտալ շինարարությունն իրականացնելու համար ներդրվելու է 1940—1970 միլիարդ ռուբլի, որը գրեթե հավասար է անցած 41 տարիների ընթացքում մեր երկրի ժողովրդական տնտեսության մեջ կատարված ներդրումներին:

Վճռական նշանակություն տալով արտադրողական ուժերի սոցիալիստական տեղաբախման սկզբունքի հետևողական իրականացմանը, ՍՄԿՊ XXI համագումարը անհրաժեշտ համարեց նշել, որ «պետք է հատուկ ուշադրությամբ վերաբերվել արտադրողական ուժերի ճիշտ տեղաբաշխմանը: Հարկավոր է ուշադրություն դարձնել երկրի արևելյան շրջանների էկոնոմիկայի հետագա զարգացմանը, որոնք բնական հսկայական հարստություններ ունեն: Արտադրական կարողությունների հետադադարավիճակից հարցերը լուծելիս պետք է նախապատվություն տալ այն շրջաններին, ուր ներդրված միջոցները տնտեսական առավելագույն արդյունք կարող են տալ»<sup>3</sup>:

Այդ կարգի շրջաններից, ինչպես մատնանշված է պարտիայի XXI համագումարի որոշումներում, առաջնակարգ նշանակություն ունեն Ուրալից տե Կասպից ծովից արևելք ընկած անծայրածիր տարածությունները, որոնց ընդերքում անրավ հարստություններ են թաքնված: Շահագործման համար անհամեմատ ավելի ձեռնտու, քան ՍՍՌՄ եվրոպական մասի հանքավայրերը, բազմազան ու բազմատեսակ արդյունաբերական հումքի և վառելիքի աղբյուրները, հիդրոէներգիայի անսպառ պաշարները, արդավանդ հողերի տասնյակ միլիոնավոր հեկտարները — այս ամենը Ստվետական Սիբիրն ու Հեռավոր Արևելքը դարձնում է մեր երկրի ամենահեռանկարային շրջանները: Ներկայումս, երբ մեր երկրում սոցիալիզմը հաղթանակել է լիովին ու վերջնականապես և երբ արտադրական ու տնտեսական բոլոր նախադրյալներն արդեն առկա են՝ ՍՍՌՄ արդյունաբերությունը ամենայն մասշտաբներով դեպի արևելք տեղաշարժելու համար, լայն հնարավորություններ կն ստեղծված այն բանի համար, որպեսզի երկրի արևելյան շրջանները դառնան այնպիսի զարգացած արդյունաբերական ռայոններ, ինչպիսիք են, օրինակ՝ Ուրալը, Դոնբասն ու կենտրոնական մարզերը:

<sup>3</sup> ՍՄԿՊ XXI համագումարի բանաձևը, էջ 10:

Յոթնամյա պլանի մեջ, ինչպես և ՍՍՒՄ ժողովրդական տնտեսության զարգացման անցյալ շնորհիվ պլաններում, իր վառ զրսերումն է գտել լենինյան ազգային քաղաքականությունը, որը լայն հնարավորություններ է ապահովում մեր բազմազգ սոցիալիստական պետության բոլոր ժողովուրդների էկոնոմիկայի և կուլտուրայի համակողմանի զարգացման համար, նրանց տնտեսական բուռն վերելքի համար: Յուրաքանչյուր ռեսպուբլիկայում զարգանալու են ամենից առաջ և ամենից լայն շափերով տնտեսության այն ճյուղերը, որոնց համար բնական ու տնտեսական առավել նպաստավոր պայմաններ կան, որոնք հնարավորություն կտան տվյալ ռեսպուբլիկայի, հետևապես և ամբողջ Սովետական Միության, ռեսուրսները առավել արդյունավետությամբ օգտագործելու:

Մեծ աշխատանքների յոթնամյա պլանի հաջող փրականացման համար հսկայական նշանակություն ունի հասարակական աշխատանքի արտադրողականության հետագա զգալի բարձրացումը, որը, ինչպես նշել է լենինը, վերջին հաշվով կոմունիզմի կառուցման վճռական նախապայմանն է: Երևելով դրանից, նախատեսվում է յոթնամյակի ընթացքում աշխատանքի արտադրողականությունը բարձրացնել արդյունավերության մեջ՝ 45—50 տոկոսով, շինարարության մեջ՝ 60—65 տոկոսով, երկաթուղային տրանսպորտում՝ 34—37 տոկոսով, սովխոզներում՝ 60—65 տոկոսով, կուլտնտեսություններում՝ մոտավորապես 2 անգամ: Յոթնամյա պլանով միաժամանակ նախատեսվում է արտադրանքի ինքնարժեքի զգալի իջեցում:

Արդյունաբերության, գյուղատնտեսության և տրանսպորտի զարգացման այս մեծ ծրագրերի իրագործումը հնարավորություն կտա զգալի շափերով՝ 62—65 տոկոսով, ավելացնել մեր երկրի ազգային եկամուտը, որի հետևանքով սպառման ֆոնդը կավելանա 60—63 տոկոսով. բանվորների և ծառայողների և կուլտնտեսականների ռեալ եկամուտները, մեկ աշխատողի հաշվով, կբարձրանան միջին թվով 40 տոկոսով, մոտակա տարիներին կվերացվեն բնակչության զանազան հարկերը, ցածր վարձատրվող բանվորների և ծառայողների աշխատավարձը 270—350 ռուբլուց կհասցվի 500—600 ռուբլու, կբարձրանա կենսաթոշակների նվազագույն չափը, զգալիորեն կբարելավվի բնակչության առևտրական ու կենցաղային սպասարկման գործը, կլայնացվի դպրոցական, կուլտուրական և առողջապահական հիմնարկների ցանցը, քաղաքներում կկառուցվի մոտ 15 միլիոն բնակարան, իսկ գյուղերում՝ մոտ 7 միլիոն տուն, հնարավոր կլինի անցնել 7 և 6-ժամյա բանվորական օրվա և 35—30-ժամյա շարաթվա, պետական և կոոպերատիվ առևտրի մանրածախ ապրանքաշրջանառության ծավալը կավելանա մոտավորապես 62 տոկոսով:

Այս բոլոր միջոցառումների կենսագործման շնորհիվ սովետական ժողովուրդը մի զգալի քայլ կկատարի կոմունիստական հասարակարգին անցնելու ասպարեզում, առավել ևս, որ կոմունիզմի նյութատեխնիկական բազայի կառուցմանը պոզիտիվ մեծ շափերով կզարգանան սովետական գիտությունն ու կուլտուրան, գրականությունն ու արվեստը:

Սովետական Միության կոմունիստական պարտիան, հենվելով մարքսիզմ-լենինիզմի ամենահաղթ ուսմունքի վրա, բոլոր սովետական մարդկանց զինում է կոմունիստական հասարակարգի կառուցման հստակ ու հոյակապ ծրագրով: Մեր սոցիալիստական հայրենիքը գտնվում է իր ուժերի բուռն ծաղկման շրջանում և վստահորեն առաջ է գնում դեպի նոր նվաճումներ: Մեր երկրում կա այն

ամենը, ինչ անհրաժեշտ է կոմունիստական հասարակարգի կառուցման համար: Անսպառ են Սովետական Միության բնական հարստությունները: Սովետական պետությունն ապացուցել է, որ կարող է այդ ամբողջ հարստություններն օգտագործել ժողովրդի բարօրության համար: Սովետական ժողովուրդը անցյալում ցույց է տվել և ներկայումս էլ ջանք չի խնայում ապացուցելու, որ ինքը կարող է կառուցել կոմունիստական հասարակարգ և հաստատու վստահությամբ է դեպի ապագան:

ՍՄԿՊ XXI համագումարի նախադժած կոմունիստական շինարարության հոյակապ պլանները, որոնց իրականացումը ամբողջ աշխարհին մի անգամ ևս ցույց կտա սոցիալիստական կարգերի անհաղթահարելի ուժը և տասնյակ միլիոնավոր սովետական մարդկանց ստեղծարար աշխատանքի թափը, կոմունիզմի նյութա-տեխնիկական բազայի կառուցմանը ձեռնամուխ եղած մեր երկրի բոլոր աշխատավորներին ոգեշնչում է անձնագործ աշխատանքի՝ հանուն այդ պլանները արագորեն կյանքում իրականացնելու:

Կոմունիստական շինարարության նոր էտապի այդ հոյակապ պլանը աշխատանքային նորանոր սխրագործությունների է ոգեշնչում սովետական ժողովրդին: Ժողովրդական տնտեսության աննախընթաց վերելքի այդ ընդարձակ ծրագիրը իրականացնելու համար Կոմունիստական պարտիան կազմակերպական հսկայական աշխատանք է ծավալում, ուղղություն տալով միլիոնավոր սովետական մարդկանց բանվորների, կոլտնտեսականների, ինտելիգենցիայի ջանքերին՝ յոթնամյակը ժամկետից շուտ կատարելու համար: ՍՄԿՊ XXI համագումարից հետո անցած ժամանակաշրջանում մամուլի էջերում հրապարակված նյութերը պերճախոս ապացույցներ են այն բանի, որ սովետական երկրի աշխատավորները եռանդուն կերպով ձեռնամուխ են եղել այդ պատվավոր խնդրի իրականացման գործին:

Մեր երկիրը ներկայումս բոլոր բարենպաստ պայմաններն ունի իր հիմնական տնտեսական խնդրի լուծման, կոմունիզմի նյութա-տեխնիկական բազայի ստեղծման, կոմունիզմի ծավալուն կառուցումը հաջողությամբ իրականացնելու համար: Դրանցից ամենագլխավորը Սովետական Միության հսկայական շափերով աճած տնտեսական հզորությունն է: Խիստ մեծ է նաև սովետական ժամանակաշրջանում աճած կարգերի հսկայական բանակի, ինչպես և մեր երկրի բնական անսպառ հարստությունների նշանակությունը՝ այդ համաշխարհային պատմական խնդրի իրականացման գործում: Ինչպես ասված է ՍՄԿՊ XXI համագումարի բանաձևում, «Սովետական Միությունում, որը մարդկության համար ճանապարհ հարթեց դեպի սոցիալիզմ, այժմ ձեռք է բերվել արտադրողական ուժերի, սոցիալիստական արտադրական հարաբերությունների և կոլտնտեսական վարձագման այնպիսի մակարդակ, որը թույլ է տալիս առաջիկա յոթնամյակում լայն ճակատով ծավալել կոմունիստական հասարակարգի կառուցումը»<sup>4</sup>:

Անցումը սոցիալիզմից դեպի կոմունիզմ իրականացվում է տնտեսական օբյեկտիվ օրենքների հիման վրա: Սովետական ժողովուրդը ի վիճակի է այդպիսի խնդիր դնել իր առջև և ձեռնամուխ լինել նրա հաջող իրականացմանը, որովհետև դեկավարվում է մարդկային հասարակության պատմության մեջ

<sup>4</sup> ՍՄԿՊ XXI համագումարի բանաձևը, էջ 10:

ամենաարդարացի իրավակարգը՝ կոմունիստական հասարակարգը կառուցելու վե՛հ գաղափարով:

Սովետական ժողովրդի առջև, որն անցել է կոմունիզմի ծավալուն կառուցման հոյակապ գործի իրականացմանը, կանգնած են այնպիսի խնդիրներ, որոնք մարդկության առջև երբևիցե ծառայած խնդիրներից ամենից ավելի հսկայականն ու մարդասիրականն են. թեպետ և ամենից ավելի դժվարը:

ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության զարգացման յոթնամյա պլանը հանդիսանում է խաղաղության մեր անխախտ ձգտման վառ արտահայտությունը, ՍՍՌՄ արտաքին խաղաղասիրական քաղաքականության փայլուն ցուցանիշը. մի խոշոր ավանդ՝ համաշխարհային խաղաղության մեծ գործին: Միաժամանակ գա այն գաղափարների վեհության և իսկական հումանիստական բնույթի արտահայտությունն է, որոնցով դեկավարվում են սովետական մարդիկ, ինչպես նաև կապիտալիստական հասարակարգի համեմատությամբ սովետական կարգերի մեծագույն առավելությունների արտահայտությունը:

\* \* \*

Սովետական Միությունը թևակոխել է իր զարգացման նոր ժամանակաշրջանը: Մեր երկրի արդեն ձեռք բերած նվաճումները, սոցիալիզմի լիակատար ու վերջնական հաղթանակը «հնարավորություն են տալիս գործնականում իրականացնելու կոմունիստական հասարակարգի նյութա-տեխնիկական բազայի ստեղծման և կոմունիզմին պլանաչափորեն անցնելու խնդիրները»: Այդ համաշխարհային պասմական խնդիրների իրականացումը զգալիորեն հեշտանում է նաև այն հանգամանքի շնորհիվ, որ Սովետական Միությունը միաճակ չէ դեպի կոմունիզմ իր առաջընթաց շարժման մեջ, որ նրա հետ կողք-կողքի, եղբայրաբար համագործակցելով, օրըսօրե աճում ու զարգանում են համաշխարհային սոցիալիստական սիստեմի բոլոր երկրները: Հեռու չէ այն օրը, երբ խաղաղ տնտեսական մրցակցության մեջ սովետական երկիրը տնտեսական զարգացմամբ իր հետևում կթողնի Ամերիկայի Միացյալ Նահանգներին, իսկ սոցիալիստական սիստեմը կարտադրի ամբողջ համաշխարհային արդյունաբերական արտադրանքի կեսից ավելին:

Սովետական ժողովուրդը, որն աշխարհում առաջինը կառուցեց սոցիալիստական հասարակարգ, վստահ քայլերով առաջ է ընթանում դեպի մարդկության լուսավոր ապագան՝ կոմունիզմ: